

**«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱԿԱԳՆԵՐ
(ՎԱՐԿԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ)**

Ուժի մեջ է 2013թ. նոյեմբերի 1-ից

1. Սույնով սահմանվում են «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Բանկ) կողմից հաճախորդներին տրամադրվող վարկերի տոկոսադրույքները, մատուցվող վարկային գործառնությունների դիմաց գանձվող սակագները և միջնորդավճարները (այսուհետ՝ Սակագներ):

2. Սույն սակագների ձևավորման հիմքում ընկած են միջազգային բանկային պրակտիկայում ծառայությունների մատուցման գոյություն ունեցող հիմնադրույթները:

3. Սույն սակագները կարող են Բանկի կողմից միակողմանիորեն փոփոխվել՝ այդ մասին նախապես Բանկի ինտերնետային կայքում և/կամ այլ հրապարակային աղբյուրներում, Բանկի տարածքում հաճախորդների համար տեսանելի վայրում տեղադրելով, ինչպես նաև համապատասխան պայմանագրերով նախատեսված կարգով հաճախորդներին տեղեկացնելով:

4. Հաճախորդի կողմից որոշակի ծառայության համար սահմանված տիպային փաստաթղթի կամ պայմանագրի ստորագրումը հաստատում է սույն սակագների, ինչպես նաև Բանկի կողմից տվյալ ծառայության համար սահմանված առանձին պայմանների և կանոնների ընդունումը:

5. Սույն սակագներով ուղղակի չնախատեսված, սակայն Բանկի կողմից մատուցվող ծառայությունների, գործառնությունների ու գործարքների պայմանները սահմանվում են Բանկի և հաճախորդի միջև կնքված պայմանագրով և/կամ Բանկի ներքին իրավական ակտերով:

6. Առանձին դեպքերում, հաշվի առնելով հաճախորդի՝ Բանկում ունեցած դրամական հոսքերի չափը, հաշիվների մնացորդները, վարկային և/կամ ավանդային պատմությունը, գործարար համբավը, Բանկի հետ համագործակցության ժամանակահատվածը, կարող են առաջարկվել սույն սակագներից արտոնյալ պայմաններով (ոչ ստանդարտ) Սակագներ:

7. Մատուցված ծառայությունների համար սույն սակագներում նշված միջնորդավճարները Բանկի կողմից միակողմանիորեն (անակցեպտ) կարող են գանձվել հաճախորդի բանկային հաշվից, եթե այլ բան սահմանված չէ հաճախորդի հետ կնքված պայմանագրով:

8. Բանկը պատասխանատու չէ անհաղթահարելի ուժի (բնական աղետներ, պետական մարմինների ակտեր, գործադուլ, քաղաքացիական հուզումներ, շրջափակումներ, հեռահաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցում, արտակարգ այլ հանգամանքներ) հետևանքով առաջացած ուշացումների, սխալների և վնասների համար:

ՎԱՐԿԵՐԻ ԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ԳԾԵՐԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐ ԵՎ ՄԻՋՆՈՐԴԱԿԱՆՈՒՄՆԵՐ	
1. Ստանդարտ գյուղատնտեսական, Պարզեցված գրավադրումով և «Express» գյուղատնտեսական վարկերը տրամադրվում են ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով	14% - 24% տարեկան տոկոսադրույթով
Ստանդարտ գյուղատնտեսական վարկի համար վարկային հաշվի բացման, վարման և սպասարկման նպատակով վարկի տրամադրման պահին հաճախորդից գանձվում է միջնորդավճար՝ վարկի գումարի 1%-ի չափով:	
2. Ամբողջությամբ ոսկու գրավով ապահովված Ստանդարտ գյուղատնտեսական վարկերը տրամադրվում են՝	
- ՀՀ դրամով	22% տարեկան տոկոսադրույթով
- ԱՄՆ դոլարով	16% տարեկան տոկոսադրույթով
Այն դեպքում, երբ Ստանդարտ գյուղատնտեսական վարկն ամբողջությամբ ապահովված է ոսկու գրավով, Ստանդարտ գյուղատնտեսական վարկի համար վարկային հաշվի բացման, վարման և սպասարկման նպատակով վարկի տրամադրման պահին հաճախորդից գանձվում է միջնորդավճար՝ վարկի գումարի 1%-ի չափով, բայց ոչ պակաս, քան 3,000 ՀՀ դրամը:	
3. Պարզեցված գրավադրումով և «Express» գյուղատնտեսական վարկերի համար վարկային հաշվի բացման, վարման և սպասարկման նպատակով վարկի տրամադրման պահին հաճախորդից միանվագ գանձվում է՝ յուրաքանչյուր տարվա համար տարեկան 1% միջնորդավճար:	
4. Գյուղատնտեսական վարկային գծեր	
- ՀՀ դրամով	24% տարեկան տոկոսադրույթով
- ԱՄՆ դոլարով	24% տարեկան տոկոսադրույթով
Հաճախորդը վարկային գծի հաշվի բացման, վարման և սպասարկման նպատակով վարկային գծի բացման պահին Բանկին մուծում է միջնորդավճար, հետևյալ չափերով.	
- 150,000 ՀՀ դրամ կամ 500 ԱՄՆ դոլար վարկային գծի դեպքում	7,000 ՀՀ դրամ
- 300,000 ՀՀ դրամ կամ 1,000 ԱՄՆ դոլար վարկային գծի դեպքում	12,000 ՀՀ դրամ
5. Սկսնակ ձեռնարկատիրական (ՓՄՁ ՁԱԿ լրիվ երաշխավորությամբ) վարկերը տրամադրվում են ՀՀ դրամով՝	12% տարեկան տոկոսադրույթով
Վարկի համար վարկային հաշվի բացման, վարման և սպասարկման նպատակով վարկի տրամադրման պահին հաճախորդից գանձվում է միջնորդավճար՝	2,000 ՀՀ դրամ
Միևնույն հաճախորդին սկսնակ ձեռնարկատիրական վարկ կարող է տրամադրվել միայն մեկ անգամ:	
6. Լոնբարդային (ոսկու գրավով ապահովված) վարկերը տրամադրվում են ՀՀ դրամով՝	19,2 - 24% տարեկան տոկոսադրույթով
Լոնբարդային վարկերի տոկոսագումարները կարող են մարվել մեկ վարկը տրամադրելու պահին (Դիսկոնտային վարկ): Այդ դեպքում տոկոսագումարները հաշվարկվում են ոսկու գրավով ապահովված վարկերի համար հաստատված տարեկան տոկոսադրույթից 2,4%-ով պակաս տոկոսադրույթով:	
Վարկի համար վարկային հաշվի բացման, վարման և սպասարկման նպատակով վարկի տրամադրման պահին հաճախորդից գանձվում է միջնորդավճար՝ վարկի գումարի 1%-ի չափով, բայց ոչ պակաս, քան 1,000 ՀՀ դրամը:	
Ոսկու գրավով ապահովված վարկը մարելուց հետո, եթե գրավականը մնում է Բանկում, ապա այն ձևակերպվում է որպես ի պահ ընդունված արժեք և հետագայում հաճախորդից գանձվում է արժեքների պահպանության վարձ՝ յուրաքանչյուր լրիվ ամսվա համար գնահատված արժեքի 0,5%-ի չափով (ներառյալ՝ ԱԱՀ):	
7. Ապառիկ վարկերը տրամադրվում են ՀՀ դրամով՝	20 - 24% տարեկան տոկոսադրույթով****
Ապառիկ վարկի համար վարկային հաշվի բացման, վարման և սպասարկման նպատակով վարկի տրամադրման ժամանակ հաճախորդից գանձվում է միջնորդավճար՝ հետևյալ չափերով.	
- մինչև 150,000 ՀՀ դրամ վարկի դեպքում	3,000 ՀՀ դրամ
- 150,001- 1 մլն ՀՀ դրամ վարկի դեպքում	5,000 ՀՀ դրամ
Առանց կանխավճարի Ապառիկ վարկի տրամադրման ժամանակ հաճախորդից գանձվում է	
- մինչև 150,000 ՀՀ դրամ վարկի դեպքում	4,000 ՀՀ դրամ
- 150,001 ՀՀ դրամից մինչև 500,000 ՀՀ դրամ	5,000 ՀՀ դրամ
- 500,001 ՀՀ դրամից բարձր	10,000 ՀՀ դրամ
- «Համակարգիչ բոլորի համար» ծրագրի շրջանակներում	7,000 ՀՀ դրամ
8. Ուսման վարկերը տրամադրվում են ՀՀ դրամով՝	19% տարեկան տոկոսադրույթով
Ուսման վարկի համար վարկային հաշվի բացման, վարման և սպասարկման նպատակով վարկի տրամադրման պահին հաճախորդից գանձվում է միջնորդավճար՝ վարկի գումարի 3%-ի չափով	
9. Սպառողական այլ վարկերը տրամադրվում են ՀՀ դրամով՝	16 - 24% տարեկան տոկոսադրույթով
Մինչև 2,000,000 ՀՀ դրամ միայն երաշխավորություններով ապահովված սպառողական այլ վարկերը տրամադրվում են ՀՀ դրամով՝	20 - 24% տարեկան տոկոսադրույթով****

**** Ապառիկ վարկերի տրամադրման շրջանակներում Բանկի հետ համագործակցող իրավաբանական անձանց/անհատ ձեռնարկատերերի հետ կնքված համագործակցության պայմանագրի հիման վրա հնարավոր է ապառիկ վարկը տրամադրել 0% տարեկան տոկոսադրույթով:

***** Ձեռուցման նպատակով տրամադրվող վարկերը տրամադրվում են ՀՀ դրամով 16-24% տարեկան տոկոսադրույթով:

Մինչև 2,000,000 ՀՀ դրամ միայն երաշխավորություններով ապահովված սպառողական այլ վարկերի տրամադրման դեպքում վարկային հաշվի բացման, վարման և սպասարկման նպատակով (բացառությամբ ջեռուցման նպատակով տրամադրվող և գրավով ապահովված վարկերի, որոնց դեպքում միջնորդավճարները գանձվում են համաձայն սույն սակագների 22 կետով սահմանված չափերի, բայց ոչ պակաս, քան 5,000 ՀՀ դրամ) հաճախորդից գանձվում է վարկի գումարի 2 տոկոսի չափով միջնորդավճար, բայց ոչ պակաս, քան 5,000 ՀՀ դրամ: 2,000,000 ՀՀ դրամից ավել գումարի դեպքում միջնորդավճարները գանձվում են համաձայն սույն սակագների 22 կետով սահմանված չափերի:	
Աշխատակիցներին սպառողական վարկերի տրամադրման դեպքում վարկային հաշվի բացման, վարման և սպասարկման նպատակով Բանկի աշխատակիցներից գանձվում է միջնորդավճար՝ համաձայն սույն սակագների 22 կետով սահմանված չափերի, բայց ոչ պակաս, քան 5,000 ՀՀ դրամ:	
Ամբողջությամբ դրամական միջոցներով ապահովված սպառողական այլ վարկերի, ամբողջությամբ դրամական միջոցներով ապահովված աշխատակիցների սպառողական վարկերի և ավանդի գրավով սպառողական այլ վարկերի համար վարկային հաշվի բացման և սպասարկման նպատակով հաճախորդից գանձվում է միջնորդավճար համաձայն սույն սակագների 22 կետով սահմանված չափերի, բայց ոչ պակաս, քան 1,500 ՀՀ դրամ:	
10. Առևտրային վարկերը տրամադրվում են ՀՀ դրամով և արտարժույթով՝	11- 24% տարեկան տոկոսադրույքով
11. Փոփոխվող տոկոսադրույքով առևտրային վարկերը տրամադրվում են ԱՄՆ դոլարով և եվրոյով՝	11- 24% տարեկան տոկոսադրույքով
Առևտրային և Փոփոխվող տոկոսադրույքով առևտրային վարկերի համար վարկային հաշվի բացման, վարման և սպասարկման նպատակով վարկի տրամադրման պահին հաճախորդից գանձվում է միջնորդավճար՝ վարկի գումարի 1%-ի չափով:	
12. Էքսպրես վարկերը տրամադրվում են ՀՀ դրամով և արտարժույթով՝	
- ՀՀ դրամով	20 - 22% տարեկան տոկոսադրույքով
- արտարժույթով	18 - 22% տարեկան տոկոսադրույքով
Էքսպրես վարկի համար վարկային հաշվի բացման, վարման և սպասարկման նպատակով վարկի տրամադրման պահին հաճախորդից գանձվում է միջնորդավճար՝ վարկի գումարի 3%-ի չափով:	
13.Ներմուծման/արտահանման խթանման վարկերը, ներմուծման/արտահանման խթանման վարկային գիծը (առևտրային վարկային գիծ), ներմուծման/արտահանման խթանման վարկային գիծը (քարտային) տրամադրվում են ՀՀ դրամով և արտարժույթով՝	սկսած 8% տարեկան
Ներմուծման/արտահանման խթանման վարկի, ներմուծման/արտահանման խթանման վարկային գծի (առևտրային վարկային գիծ), ներմուծման/արտահանման խթանման վարկային գծի (քարտային) համար վարկային հաշվի բացման, վարման և սպասարկման նպատակով վարկի/վարկային գծի տրամադրման/բացման պահին հաճախորդից գանձվում է միջնորդավճար՝ վարկի/վարկային գծի գումարի 1%-ի չափով:	
Ներմուծման/արտահանման խթանման վարկային գծի (առևտրային վարկային գիծ) դեպքում վարկային գծի չօգտագործված մասի նկատմամբ հաշվարկվող տոկոսադրույք՝	0%
14. Առևտրային վարկային գծերը տրամադրվում են ՀՀ դրամով և արտարժույթով՝	
Առևտրային վարկային գծի օգտագործված մասի տոկոսադրույք՝	
- ՀՀ դրամով	13 - 24% տարեկան
- արտարժույթով	13 - 24% տարեկան
Առևտրային վարկային գծի չօգտագործված մասի տոկոսադրույք՝	2 - 4% տարեկան
Առևտրային վարկային գծի հաշվի բացման, վարման և սպասարկման նպատակով վարկային գծի բացման պահին հաճախորդից գանձվում է միջնորդավճար՝ վարկային գծի առավելագույն սահմանաչափի 1%-ի չափով:	
15. Օվերդրաֆտերը տրամադրվում է ՀՀ դրամով և արտարժույթով (ԱՄՆ դոլար, եվրո)՝	
Օվերդրաֆտի օգտագործված մասի տոկոսադրույք՝	սկսած 14% տարեկան
Օվերդրաֆտի հաշվի բացման, վարման և սպասարկման նպատակով օվերդրաֆտի բացման պահին հաճախորդից գանձվում է միջնորդավճար՝ օվերդրաֆտի առավելագույն սահմանաչափի 1%-ի չափով:	
16. Անշարժ գույքի վերանորոգման (վերակառուցման) և Անշարժ գույքի ձեռքբերման (գնման) նպատակով հիփոթեքային վարկեր:	
16.1. Անշարժ գույքի վերանորոգման (վերակառուցման) հիփոթեքային վարկերը տրամադրվում են ՀՀ դրամով կամ արտարժույթով՝	
- ՀՀ դրամով	18 - 20% տարեկան տոկոսադրույքով
- արտարժույթով	16 - 18% տարեկան տոկոսադրույքով
Անշարժ գույքի վերանորոգման հիփոթեքային վարկի համար վարկային հաշվի բացման, վարման և սպասարկման նպատակով վարկի տրամադրման պահին հաճախորդից գանձվում է միջնորդավճար՝ վարկի գումարի 1%-ի չափով:	
16.2. Անշարժ գույքի ձեռքբերման (գնման) նպատակով հիփոթեքային վարկերը տրամադրվում են ՀՀ դրամով կամ արտարժույթով	
- երբ Բանկում հաճախորդի հաշիվների վերջին 6 ամիսներին յուրաքանչյուր ամսվա միջին օրական մնացորդը գերազանցում է 300,000 ՀՀ դրամը կամ համարժեք արտարժույթը	12% - 14% տարեկան տոկոսադրույքով
- երբ Բանկում հաճախորդի հաշիվների վերջին 6 ամիսներին յուրաքանչյուր ամսվա միջին օրական մնացորդը չի գերազանցում 300,000 ՀՀ դրամը կամ համարժեք արտարժույթը	14% տարեկան տոկոսադրույքով
- երբ հաճախորդը հանդիսանում է Բանկի հետ աշխատավարձային ծրագրի մասին համագործակցության պայմանագիր ունեցող կազմակերպության աշխատակից	13% - 14% տարեկան տոկոսադրույքով

Անշարժ գույքի ձեռքբերման (գնման) հիփոթեքային վարկի համար վարկային հաշվի բացման, վարման և սպասարկման նպատակով վարկի տրամադրման պահին հաճախորդից գանձվում է միջնորդավճար՝ վարկի գումարի 1%-ի չափով:	
17. «Երիտասարդ ընտանիքին մատչելի բնակարան» ծրագրի շրջանակներում անշարժ գույքի ձեռքբերման (գնման) նպատակով հիփոթեքային վարկերը տրամադրվում են ՀՀ դրամով՝ «Երիտասարդ ընտանիքին մատչելի բնակարան» ծրագրի շրջանակներում անշարժ գույքի ձեռքբերման (գնման) հիփոթեքային վարկի համար վարկային հաշվի բացման, վարման և սպասարկման նպատակով վարկի տրամադրման պահին հաճախորդից գանձվում է միջնորդավճար՝ վարկի գումարի 1%-ի չափով:	10.5% տարեկան տոկոսադրույքով
18. Ավանդի գրավով սպառողական վարկերը տրամադրվում են ՀՀ դրամով: Տարեկան տոկոսադրույքը սահմանվում է համաձայն 21 կետի:	
18.1. Ավանդի գրավով սպառողական վարկերի տրամադրման դեպքում վարկային հաշվի բացման, վարման և սպասարկման նպատակով գանձվում է միջնորդավճար՝ համաձայն սույն սակագնի 22 կետի, բայց ոչ պակաս, քան 1,500 ՀՀ դրամ:	
19. «ԱՊՈՒԻԿ ՏԵՂՈՒՄ» վարկերը տրամադրվում են ՀՀ դրամով՝	20%-24% տարեկան տոկոսադրույքով
19.1.«ԱՊՈՒԻԿ ՏԵՂՈՒՄ» վարկերի վարկային հաշվի բացման, վարման և սպասարկման նպատակով յուրաքանչյուր ամիս գանձվում է վարկի պայմանագրային գումարի 0.2% չափով միջնորդավճար (գանձումն իրականացվում է վարկի մարման գրաֆիկով նախատեսված ամսական մարումների հետ):	
20. Սոցիալական փաթեթի հաշվի օվերդրաֆտը տրամադրվում է ՀՀ դրամով՝ Սոցիալական փաթեթի հաշվի օվերդրաֆտի օգտագործված մասի տոկոսադրույք՝	16% տարեկան
Սոցիալական փաթեթի հաշվի օվերդրաֆտի հաշվի բացման, վարման և սպասարկման նպատակով վարկային գծի բացման պահին հաճախորդից միջնորդավճար չի գանձվում:	
21. Ընթացիկ հաշվին սառեցված կամ ժամկետային ավանդում ներդրված, ամբողջությամբ դրամական միջոցներով ապահովված ավանդի գրավով սպառողական, սպառողական այլ, առևտրային, էքսպրես, ստանդարտ գյուղատնտեսական վարկերի տարեկան տոկոսադրույքը սահմանվում է վարկի տրամադրման պահին Դասական ժամկետային ավանդատեսակի՝ տրամադրվող վարկի ժամկետին համապատասխանող տոկոսադրույքից 4 տոկոսային կետով ավել, եթե վարկը և ներդրված միջոցները միևնույն արժույթով են, իսկ եթե դրամական միջոցների և տրամադրվող վարկի արժույթները տարբեր են, ապա տարեկան տոկոսադրույքը սահմանվում է դրամային Դասական ժամկետային ավանդատեսակի՝ տրամադրվող վարկի ժամկետին համապատասխանող տոկոսադրույքից 6 տոկոսային կետով ավել: Ընդ որում, եթե տրամադրվող վարկի ժամկետին համապատասխանող դրամային ավանդի տոկոսադրույքը ցածր է գործող ավանդի տոկոսադրույքից, ապա վարկի տարեկան տոկոսադրույքը սահմանվում է գործող ավանդի տոկոսադրույքից 4 տոկոսային կետով ավել (եթե վարկը և ներդրված միջոցները միևնույն արժույթով են), կամ գործող ավանդի տոկոսադրույքից 6 տոկոսային կետով ավել (եթե վարկը և ներդրված միջոցները տարբեր արժույթով են):	
22. Վարկային հաշվի բացման, վարման և սպասարկման նպատակով գանձվող միջնորդավճարները ջեռուցման նպատակով տրամադրվող սպառողական այլ վարկերի, մինչև 2,000,000 ՀՀ դրամ գրավով ապահովված և 2,000,000 ՀՀ դրամից ավել սպառողական այլ վարկերի, աշխատակիցներին սպառողական վարկերի տրամադրման դեպքում:	
Վարկի գումարի մեծություն	Միջնորդավճարի մեծություն
Մինչև 400,000 ՀՀ դրամ	1,000 ՀՀ դրամ
400,001 – 600,000 ՀՀ դրամ	1,500 ՀՀ դրամ
600,001 – 800,000 ՀՀ դրամ	2,000 ՀՀ դրամ
800,001 – 1,000,000 ՀՀ դրամ	2,500 ՀՀ դրամ
1,000,001 – 1,200,000 ՀՀ դրամ	3,000 ՀՀ դրամ
1,200,001 – 1,600,000 ՀՀ դրամ	4,000 ՀՀ դրամ
1,600,001 – 2,000,000 ՀՀ դրամ	5,000 ՀՀ դրամ
2,000,001 – 2,400,000 ՀՀ դրամ	6,000 ՀՀ դրամ
2,400,001 – 2,800,000 ՀՀ դրամ	7,000 ՀՀ դրամ
2,800,001 – 3,200,000 ՀՀ դրամ	8,000 ՀՀ դրամ
3,200,001 – 3,600,000 ՀՀ դրամ	9,000 ՀՀ դրամ
3,600,001 – 4,000,000 ՀՀ դրամ	10,000 ՀՀ դրամ
4,000,001 – 6,000,000 ՀՀ դրամ	15,000 ՀՀ դրամ
6,000,001 – 8,000,000 ՀՀ դրամ	20,000 ՀՀ դրամ
8,000,001 – 12,000,000 ՀՀ դրամ	30,000 ՀՀ դրամ
12,000,001–16,000,000 ՀՀ դրամ	40,000 ՀՀ դրամ
16,000,001-ից բարձր ՀՀ դրամ	50,000 ՀՀ դրամ
23. Եթե վարկը և հաշվարկված տոկոսագումարները ժամկետից շուտ ամբողջությամբ մարելիս արդեն իսկ վճարված և մարման պահին հաշվարկված տոկոսագումարների հանրագումարը պակաս է առաջին 3 ամիսների համար սահմանված տոկոսագումարից, ապա գանձվում է նաև այդ տարբերության չափով տոկոսագումար: Սույն կետի դրույթները չեն տարածվում սույն սակագների 6, 7, 8, 9 18 և 19 կետերում նշված 10,000,000 ՀՀ դրամը չգերազանցող գումարի վարկերի վրա: Սույն կետի դրույթները չեն տարածվում նաև 24 կետում նշված վարկերի վրա:	

<p>24. Անշարժ գույքի վերանորոգման (վերակառուցման), անշարժ գույքի ձեռքբերման (զննան), «Երիտասարդ ընտանիքին մատչելի բնակարան» ծրագրի շրջանակներում անշարժ գույքի ձեռքբերման (զննան) հիփոթեքային վարկերը կարող են մարվել պայմանագրային ժամկետներից շուտ, որի դեպքում, հաճախորդը վճարում է վարկի փաստացի ժամկետի համար հաշվարկված տոկոսագումարը, ինչպես նաև վարկի մարման գրաֆիկով նախատեսված ժամկետից շուտ մարվող վարկի կապիտալի 1%-ը:</p>	
<p>25. Այն դեպքում, երբ սույն սակագներում սահմանված վարկային տոկոսադրույքները գերազանցում են ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված հաշվարկային տոկոսադրույքի կրկնապատիկը, ապա վարկերը տրամադրվում են ՀՀ կենտրոնական բանկի հաշվարկային տոկոսադրույքի կրկնապատիկով:</p>	
<p>26. Տրանսպորտային միջոցի կամ գյուղատնտեսական այլ նշանակության տեխնիկայի գրավով ապահովված վարկերի, օվերդրաֆտների, առևտրային վարկային գծերի, քարտային հաշվի վարկային գծերի, ակրեդիտիվների, բանկային երաշխիքների և ֆակտորինգների տրամադրման ժամանակ, վարկի տրամադրման պահին գանձվում է փաստաթղթավորման միջնորդավճար՝ 5,000 ՀՀ դրամ (ներառյալ՝ ԱԱՀ), անկախ գրավի պայմանագրերի քանակից:</p> <p>Սույն կետը չի տարածվում էքսպրես, ուսման, պարզեցված գրավադրույքով գյուղատնտեսական վարկերի վրա:</p>	
<p>27. ՀՀ Կառավարությանն առընթեր ՀՀ Ոստիկանության «ճանապարհային ոստիկանություն» ծառայությանը՝ գրավադրվող մեքենաների վերաբերյալ (արգելանքի տակ է, թե ոչ) հարցում կատարելիս հաճախորդից գանձվում է 3,000 ՀՀ դրամ միջնորդավճար:</p>	
<p>28. Գործող պարտավորության(ների) ապահովման միջոցի փոփոխման դեպքում (գրավի հանում, փոխարինում և այլն), ինչպես նաև ապագայում ծագելիք պարտավորության(ների) ապահովման միջոցի փոփոխման դեպքում (գրավի փոխարինում և այլն) գանձվում է միջնորդավճար պարտավորության(ների) ապահովման յուրաքանչյուր փոփոխվող միջոցի համար 10 000 ՀՀ դրամի չափով: Ընդ որում՝ պարտավորության(ների) ապահովման միջոց ավելացնելու դեպքում միջնորդավճար չի գանձվում:</p>	
<p>28.1. Գործող պարտավորության ապահովման միջոցի գնահատված արժեքի և ապագայում ծագելիք պարտավորության ապահովման միջոցի գնահատված արժեքի վերազնահատում (ավելացում) (բացառությամբ ոսկու գնահատված արժեքի վերազնահատման, որի վերազնահատումը կատարվում է անվճար):</p>	10,000 ՀՀ դրամ
<p>28.2. Գործող պարտավորության ապահովման միջոցի գնահատված արժեքի վերազնահատում (նվազում)</p>	անվճար
<p>28.3. Հաճախորդի դիմումի համաձայն գործող պարտավորության(ների) ապահովման միջոցի, ինչպես նաև ապագայում ծագելիք պարտավորության(ների) ապահովման միջոցի տվյալ(ներ)ի փոփոխման դեպքում (տեխ. անձնագրի, սեփականության վկայականի տվյալների, սեփականատիրոջ(երի) փոփոխություններ և այլն) փոփոխման թույլտվության վերաբերյալ գրության տրամադրման պահին գանձվում է միջնորդավճար պարտավորության(ների) յուրաքանչյուր ապահովման միջոցի տվյալ(ներ)ի փոփոխման համար 5,000 ՀՀ դրամի չափով:</p>	
<p>28.4. Հաճախորդի դիմումի համաձայն վարկի (բացառությամբ լոնբարդային վարկերի) վերջնաժամկետի երկարաձգման դեպքում միանվագ գանձվում է միջնորդավճար երկարաձգված ժամանակահատվածի համար (երկարաձգված վերջնաժամկետ և պայմանագրային վերջնաժամկետի տարբերություն), որը հաշվարկվում է փոփոխության օրվա դրությամբ մայր գումարի (կապիտալի) մնացորդի նկատմամբ:</p>	միանվագ 0.5% տարեկան հաշվարկով
<p>28.5. Հաճախորդի դիմումի համաձայն 2,000,000 ՀՀ դրամ պայմանագրային գումարը գերազանցող վարկերի (բացառությամբ՝ լոնբարդային վարկերի) մարման գրաֆիկի փոփոխություններ (բացառությամբ՝ 28.4 կետում նշված դեպքերի):</p>	50,000 ՀՀ դրամ